

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Մասնագետ-հաշվետար
Ա/Ի

Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Առողջության ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի վայրը

քաղաք Եղվարդ, քաղաք Աբովյան

Աշխատանքի նկարագիր

- Իրականացնել խախտման արձանագրությունների բլանկների, հոլոգրաֆիկ կնիքների և ջրազրկման կնիքների բաշխման/վերաբաշխման աշխատանքների հաշվառում և անհրաժեշտ տեղեկատվությունը մուտքագրել Ընկերության ներքին համակարգ;
- Անհրաժեշտության դեպքում Ընկերության ներքին համակարգ մուտքագրել առևտրային ջրաչափերի ցուցմունքները, խախտման արձանագրությունները, ջրաչափերի հանձնարարականները և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:
- Իրականացնել տեղամասի սպասարկման ներքո գտնվող գույքի և ապրանքանյութական արժեքների շարժի հաշվառում, կազմել և ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը անմիջական ղեկավարին;
- Ստացված դիմումների, հանձնարարականների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը պարբերաբար ներկայացնել իր անմիջական ղեկավարին;
- Ընդունել և սպասարկել Ընկերության գրասենյակներ այցելած քաղաքացիներին, տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում՝ ուղղորդել Ընկերության համապատասխան ստորաբաժանումներ;
- Ընդունել քաղաքացիների կամ բաժանորդների կողմից «Վեոլիա Ջուր» ընկերությանը հասցեագրված գրությունները, նամակները, դիմումները, դրանց վերաբերող փաստաթղթերն ու տեղեկատվությունը մուտքագրել Ընկերության ներքին համակարգ, հաշվառել և/կամ փոխանցել համապատասխան ստորաբաժանմանը;
- Անհրաժեշտության դեպքում աջակցել մասնագետ տեսուչներին, տրամադրել բաժանորդներին ուղարկվող փաստաթղթեր (հիշեցումներ, ծանուցումներ, հաշվարկներ, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտեր և այլն);
- Բաժանորդների հետ կնքել և/կամ վերակնքել պայմանագրեր;
- Իրականացնել տեղամասի աշխատակիցների հաճախելիության մատյանի վերահսկում, ինչպես նաև աշխատակիցներին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը տրամադրել համապատասխան ստորաբաժանում;

Պահանջներ

- Բարձրագույն կրթություն;
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ;
- Թիմային աշխատանք;
- Հաղորդակցման հմտություններ;
- Կազմակերպչական ունակություններ;
- Օտար լեզուների իմացությունը կղիտվի որպես առավելություն:

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները /CV հայերեն կամ անգլերեն լեզուներով am.water.hr@veolia.com էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **մասնագետ-հաշվետար**: Հարցազրույցի կիրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: